# 1915-2015. ԱՌԱՆՑ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ


# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 26-27 (16324) ՇԱԲԱԹ, 18 ԱՊՐԻԼԻ 2015 Թ. ԳԻՆԸ` 25 ԹԵՏՐԻ




## ՃԱՆԱՉԵԼ ՈՒ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ ԵՆ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընթացիկ տարվա ապրիլի 24-ին համայն հայությունը եւ առաջադեմ աշխարհը նշում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Դեռեւս նախանցյալ դարի վերջերից համաշխարհային հանրության քննարկման առարկա դարձած «Հայկական հարցը» նոր նկարագիր ու ընթացք ստացավ հայկական անկախ պետականության վերականգնումից հետո: Դրա ակնհայտ վկայությունն է Հայոց ցեղասպանության ճանաչման աշխարհագրության ընդլայնումը: Եթե մինչեւ 1991 թվականը, մինչեւ անկախ Հայաստանի հռչակումը, Ցեղասպանությունը ճանաչած երկրների թիվը հաշվարկվում էր միավորներով (Ուրուգվայ, Կիպրոս, Կանադա), ապա ներկայումս հայ ժողովրդի դեմ իրականացրած ոճրագործությունը ճանաչել ու դատապարտել են ավելի քան երկու տասնյակ երկրներ: Ձեզ ենք ներկայացնում աշխարհի երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ժամանակագրությունը:

*Ուրուգվայ (1965 թ.-ին` Խորհրդարանի բանաձեւով, 2004 թ.-ին` օրենքով), Կիպրոս (1982 թ.-ին` Խորհրդարանի բանաձեւով), Եվրամիություն (1987, 1998, 2000, 2001, 2002, 2005 թթ.-ին` Եվրախորհրդի բանաձեւերով), Արգենտինա (1988, 1993, 2005-06 թթ.-ին` Սենատի բանաձեւերով, 2004, 2007 թթ.-ին` օրենքով), Ռուսաստան (1995 թ.-ին` Պետդումայի հայտարարությամբ), Կանադա (1996, 2002, 2004 թթ.-ին` Խորհրդարանի բանաձեւերով), Հունաստան (1996 թ.-ին` Խորհրդարանի բանաձեւով), Լիբանան (1997, 2000 թթ.-ին` Խորհրդարանի բանաձեւերով), Բելգիա (1998 թ.-ին` Սենատի բանաձեւով), Ֆրանսիա (1998 եւ 2000 թթ.-ին` Խորհրդարանի որոշումներով, 2001 թ-ին` օրենքով), Շվեդիա (2000 թ.-ին` Խորհրդարանի զեկույցով), Վատիկան (2000 թ.-ին), Իտալիա (2000 թ.-ին` Խորհրդարանի որոշումով), Շվեյցարիա (2003 թ.-ին` Ազգային խորհրդի բանաձեւով), Սլովակիա (2004 թ.-ին` Խորհրդարանի որոշումով), Նիդերլանդներ (2004 թ.-ին` Խորհրդարանի բանաձեւով), Լեհաստան (2005 թ.-ին` Խորհրդարանի բանաձեւով), Վենեսուելա (2005 թ.-ին` Խորհրդարանի բանաձեւով), Գերմանիա (2005 թ.-ին` Խորհրդարանի բանաձեւով), Լիտվա (2005 թ.-ին` Ասամբլեայի որոշումով), Չիլի (2007 թ.-ին` Սենատի բանաձեւով), ԱՄՆ (2007 եւ 2010 թթ.-ին` Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների ենթակոմիտեի որոշմամբ):*

## ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ



Հայ ժողովուրդն այլեւս երբեք թույլ չի տա իր հետ վարվել այնպես, ինչպես 1915 թվականին ու դրանից առաջ, դրանից հետո... Հայ ժողովուրդն այլեւս երբեք չի խաբվելու, որովհետեւ անվերադարձ թոթափել է մշուշը իր գիտակցության վրայից եւ այսուհետեւ ապավինելու է միայն ու միայն իր սեփական ուժին... Հայ ժողովուրդն այլեւս երբեք չի պարտվելու, որովհետեւ յուրացրել է արդեն պատմության մեծագույն դասը. չկան լավ կամ վատ ժողովուրդներ, այլ կան միայն ազգային շահեր, որոնք կարող են համընկնել կարճատեւ պահերի միայն, իսկ ընդհանրապես` գտնվում են հավերժական բախման ու պայքարի մեջ, եւ «հաղթում է ոչ թե արդարը, այլ` ուժեղը»:

*Մենք կայինք դրանից առաջ, ու դարեր առաջ,*
*Ու կանք դրանից հետո,*
*Ու կլինենք դարեր անց -*
*Ցմահն աշխարհի, որ չկա:*

## ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ԱՌԱՋԻՆ. «ՀԻՇԵԼԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է. ԾԱԾԿԵԼ ՀԱՆՑԱՆՔԸ, ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԹՈՂՆԵԼ, ՈՐ ՎԵՐՔԸ ԱՐՆԱՀՈՍԻ»

***Ապրիլի 12-ին Վատիկանում, Սուրբ Պետրոսի տաճարում Հռոմի Կաթոլիկ եկեղեցու Քահանայապետ Ֆրանցիսկոս պապի կողմից Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ մատուցվեց Սուրբ Պատարագ:***



Սրբազան արարողությանը, որին ներկա էին Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանը եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հայ-

(Շարունակությունը` 2-րդ էջում)

## სომხების გენოციდის აღიარება და გასამართლება

1915 წელს, საფრანგეთმა, დიდმა ბრიტანეთმა და რუსეთმა გამოსცეს ერთიანი დეკლარაცია, რომელიც ასევე სომხების განადგურებას ასამართლებდა. აშშ-მა სამჯერ (1916, 1919, 1920) მიიღო მსგავსი რეზოლუციები, თუმცა ოსმალეთის იმპერიის ქმედების შეჩერება ვერ მოხერხდა. ამის შესახებ მსოფლიოს მოწინავე ქვეყნებმა მიიღეს რეზოლუციები, რომელიც სომხურ გენოციდს ასამართლებდნენ.

სომხების გენოციდი აღიარებულია და გასამართლებულია ბევრი ქვეყნისა და საერთაშორისო ორგანიზაციების მიერ. პირველმა, ოფიციალურად, ურუგვაიმა აღიარა და გაასამართლა სომხების გენოციდი (1965 წ.). 1984 წელს ჰააგის საერთაშორისო ტრიბუნალმა, 1987 წელს - ევროკავშირმა, ევროპარლამენტმა, გაერომ დისკრიმინაციის შეწყვეტისა და ეთნიკური უმცირესობების დასაცავად, მსოფლიო ეკლესიათა კავშირმა და ა. შ.

(გაგრძელება მე-5 გვერდზე)

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## ԿԱԽԵԹԻՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ «ՈՒԺԵՂ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ, ՈՒԺԵՂ ՎՐԱՍՏԱՆ» ՆԱԽԱԳԻԾԸ




***Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Կախեթիի տարածաշրջանում մասնակցեց «Ուժեղ տարածաշրջաններ, ուժեղ Վրաստան» նախագծի շնորհանդեսին:***

Իր ելույթում, վարչապետը խոսեց Կախեթիի տարածաշրջանում իրականացված եւ ընթացիկ նախագծերի մասին:

Վարչապետը խոսեց նաեւ տարածաշրջանում վերջին ժամանակներս ավելացած ներդրումների մասին: Նրա խոսքերով, Կախեթիում իրականացվող նախագծերի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 224 միլիոն

(Շարունակությունը` 6-րդ էջում)

ԱՅՑ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ԱՌԱՋԻԿԱ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ



***Ապրիլի 15-ին Վրաստանի Նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին պաշտոնական այցով մեկնեց Լատվիա:***

Ապրիլի 16-ին Վրաստանի ղեկավարը հանդիպում ունեցավ Լատվիայի Նախագահ Անդրիս Բերզինշեմի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկու երկրների հարաբերությունների, տնտեսական կապերի առաջիկա խորացման հետ առնչվող հարցեր: Որպես առանձին թեմա երկու երկրների ղեկավարները քննարկեցին «Արեւելյան գործընկերության» Ռիգայում

(Շարունակությունը` 6-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## ԿԱԽԵԹԻՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ «ՈՒԺԵՂ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ, ՈՒԺԵՂ ՎՐԱՍՏԱՆ» ՆԱԽԱԳԻԾԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

լարի: Վարչապետի հավաստմամբ, ֆինանսավորում է տրվել 34 ձեռնարկությունների, որոնց տրվել է 21 միլիոն լարիի վարկ: Վարչապետի խոսքերով, տարածաշրջանում նշանակալիորեն ավելացել է մշակվող վարելահողերի տարածքը: Ներկա դրությամբ, այստեղ հերկվել է շուրջ 10 հազար հողատարածք: Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ կառավարության կողմից իրականացվող արտոնյալ ագրովարկերի նախագծի շրջանակներում Կախեթիի տարածաշրջանին հատկացվել է 22 միլիոն դոլար, ինչը հնարավորություն է ընձեռել տեխնիկապես վերահանդերձավորել ու հզորացնել 56 ընկերությունների:

Վարչապետը գործարարներին կոչ արեց առավել ակտիվ մասնակցություն ցուցաբերել տարածաշրջանի մասշտաբով իրականացվող ենթակառուցային նախագծերի իրականացմանը, միջոցներ ներդնել տնտեսական կոնկրետ ոլորտների զարգացման համար:

ԱՅՑ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ԱՌԱՋԻԿԱ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

անցկացվելիք գագաթաժողովի թեման:

Պաշտոնական այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպում ունեցավ Լատվիայի խորհրդարանի նախագահ Ինորա Մուրնիեցու, վարչապետ Լայմդոտ Ստրաույումի հետ:

Վրաստանի նախագահի գլխավոր պատվիրակության կազմում էին արտաքին գործերի նախարար Թամար Բերուչաշվիլին, մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարար Միխեիլ Գիորգաձեն, գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան, եվրոպական եւ եվրատլանտյան կառույցների ինտեգրման հարցերով պետնախարար Դավիթ Բաքրաձեն, ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա Իմերլիշվիլին, էկոնոմիկայի փոխնախարար Քեթեւան Բոճորիշվիլին, Վրաստանի առեւտրաարդյունաբերական պալատի նախագահ Կախա Բաինդուրաշվիլին, բիզնես-ասոցիացիայի գլխավոր տնօրեն Իրակլի Ասլանիշվիլին, պաշտոնական այլ անձինք:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԷԻՆ

*Ապրիլի 15-ին պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում ԵԱՀԿ-ի ազգային փոքրամասնությունների գործերի կոմիսար Աստրիդ Տորսը: Այցի շրջանակներում՝ եվրոպական դիվանագետը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, ԱԳ նախարար Թամար Բերուչաշվիլու, պաշտոնական այլ անձանց հետ:*

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ ԵԱՀԿ-ի ազգային փոքրամասնությունների գործերի կոմիսար Աստրիդ Տորսը Թբիլիսիում կայացած հանդիպմանը քննարկեցին Վրաստանի ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրները, ինչպես նաեւ դրանց լուծման ուղիները:

«Մենք քննարկեցինք ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրներն ու մարտահրավերները, ինչպես նաեւ աշխարհաքաղաքական այն մարտահրավերները, որոնք ծառացած են մեր երկրի առջեւ: Արծարծվել են նաեւ Եվրամիությանը ապագա ինտեգրացման նախագծերը»,- հանդիպումից հետո հայտարարեց Տորսը:

Վրաստանի վարչապետի եւ ԵԱՀԿ-ի ազգային փոքրամասնությունների գործերի կոմիսարի հանդիպմանն առանձնակի ուշադրություն հատկացվեց եվրաինտեգրման գործընթացին Վրաստանի ազգային փոքրամասնությունների մասնակցության ակտիվացման հարցին:

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

## ՎՐԱՍՏԱՆԸ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆՈՒՄ Է ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԱԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ



*Ինչպես արդեն հաղորդել ենք, երկօրյա պաշտոնական այցով Թբիլիսիում էին գտնվում Լեհաստանի, Դանիայի եւ Շվեդիայի ԱԳ նախարարներ Գժեգոժ Սխետինան, Մարտին Լիդեգաարդը եւ Մարգոտ Վալսթրյոմը:*

Այցի շրջանակներում՝ եվրոպական դիվանագետների հետ հանդիպում ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, արտաքին գործերի նախարար Թամար Բերուչաշվիլին: Հյուրերը հանդիպեցին նաեւ Վրաստանի խորհրդարանական փոքրամասնության եւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Հանդիպումներում ընդգծվեց, որ Վրաստանի իշխանությունները լրջորեն կենտրոնացված են Եվրամիության հետ ինտեգրման պահանջների կատարման համար:

Վրաստանի արտաքին գործերի նախարար Թամար Բերուչաշվիլին, նախարարների այցը գնահատեց որպես աջակցություն Վրաստանի տարածքային ամբողջականությանն ու ինքնիշխանությանը եւ եվրաինտեգրման նրա ձգտմանը:

«Ցանկանում եմ ողջունել այդ երկրների ներկայացուցիչներին, որոնք ընդհանուր աջակցություն եւ համերաշխություն են հայտնել Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ընտրությանը... Համատեղ այցը այն բանի հստակ ապացույցն է, որ այդ երկրները վճռականորեն պաշտպանում են մեր երկրի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը, ինչպես նաեւ եվրոպական ինտեգրացումը»,- հայտարարել է Բերուչաշվիլին՝ ապրիլի 14-ին Թբիլիսիում կայացած մամուլի ասուլիսում:

Այցի շրջանակներում՝ Վրաստանի եւ Լեհաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները ստորագրեցին հուշագիր համագործակցության նոր ձեւաչափի՝ «Թբիլիսյան խորհրդաժողովի» ստեղծման մասին: Այդ փաստաթուղթը ենթադրում է Լեհաստանի աջակցությունը Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրացման ճանապարհին:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՎԻԱՉՎԵՐԹԵՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

*Վրացական եւ ռուսական կողմերն ավարտել են երկու երկրների միջեւ տեխնիկական կոնսուլտացիաներն ավիափոխադրումների հաճախականության ու աշխարհագրական ընդգրկման շուրջ եւ հասել են համաձայնությունների:*

Բացի «Թբիլիսի-Մոսկվա» չվերթից, համաձայնություն է ձեռք բերվել Վրաստանի եւ Ռուսաստանի Դաշնության մյուս քաղաքների միջեւ կանոնավոր օդային հաղորդակցությունը վերսկսելու շուրջ:

Մասնավորապես, վրացական ավիափոխադրողները կանոնավոր չվերթեր կիրականացնեն Ռուսաստանի յոթ քաղաքների՝ Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Սամարայի, Եկատերինբուրգի, Սոչիի, Միներալնիե Վոդի եւ Ռոստովի ուղղությամբ: Ինչ վերաբերում է ռուսական ավիաընկերություններին, ապա նրանք կթռչեն Թբիլիսի, Բաթումի եւ Քութայիսի:

Ըստ ձեռք բերված համաձայնության՝ «Մոսկվա-Թբիլիսի» օդային ուղեգծով թռիչքները կիրականացվեն յուրաքանչյուր կողմի համար 18 հաճախականությամբ՝ ձմեռային նավագնացության տարեշրջանում եւ 21 հաճախականությամբ՝ ամառային նավագնացության տարեշրջանում:

ՌԴ-ի եւ Վրաստանի միջեւ կանոնավոր ուղղակի ավիահաղորդակցությունը չեղյալ էր հայտարարվել 2006 թվականին երկու երկրների միջեւ հարաբերությունները սրվելուց հետո, այնուհետեւ որոշ ժամանակով վերականգնվել էր 2008 թվականին, իսկ հետո կրկին ընդհատվել օգոստոսյան իրադարձություններից եւ երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո:

Կանոնավոր ավիահաղորդակցությունը վերսկսելու մասին որոշումն ընդունվել է 2014 թվականի սեպտեմբերին: Դրանից հետո կանոնավոր ավիաչվերթեր են իրականացնում չորս ավիաընկերություններ: Դրանցից երեքը ռուսական են՝ «Սիբիր»-ը, «Տրանսաերո»-ն եւ «Աերոֆլոտ»-ը, իսկ մեկը՝ Airzena - Georgian Airways-ը՝ վրացական:



### ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՕՐԸ




*Ապրիլի 14-ին Վրաստանը նշեց մայրենի լեզվի օրը: Միջոցառման շրջանակներում անցկացվեցին մի շարք միջոցառումներ:*

*Օրվա կապակցությամբ, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, իր ուղերձում երախտագիտություն է հայտնել բոլոր նրանց, ովքեր պայքարել են վրաց լեզվի կարգավիճակի պահպանման համար:*

*Իր հերթին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, իր ուղերձում ընդգծելով լեզվի կարեւոր նշանակությունը, նշում է. «Այսօր, երբ վրացերենին որպես պետական լեզվի ոչինչ չի սպառնում, մեր պարտքն է զգույշ վերաբերմունք ցուցաբերենք, պահպանենք լեզվի մաքրությունը եւ այն փոխանցենք ապագա սերունդներին»:*

### ԲԻԶՆԵՍ-ՆԱԽԱԳԾԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է

*«Արտադրի՛ր Վրաստանում» պետական ծրագրի շրջանակներում միկրո եւ փոքր գործարարության բիզնես-նախագծերի մրցույթի դիմումների ընդունման ժամկետը երկարաձգվել է մինչեւ մայիսի 5-ը:*

*Դիմումների ընդունումը իրականացվում է Վրաստանի էկոնոմիկայի նախարարության www.qartuli.ge կայքէջում:*

### ՎՐԱՑԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՏԱԿԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ԱՖՂԱՆՍՏԱՆԻՑ

*Վրացական բանակի 5-րդ հետեւակային բրիգադի 51-րդ գումարտակի առաջին հոսքը Աֆղանստանից վերադարձավ հայրենիք: Օդանավակայանում 150 վրաց զինծառայողներին դիմավորեցին Վրաստանի պաշտպանության նախարարության եւ գլխավոր շտաբի բարձրաստիճան պաշտոնյաներ:*

*Աֆղանստանում 51-րդ գումարտակին փոխարինելու է 4-րդ մեքենայացված բրիգադի 43-րդ գումարտակը:*

### ՔՆՆԱՐԿՎՈՒՄ Է ԲՆԱԿՀԱՐԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

*Վրաստանի խորհրդարանը ձեռնամուխ է եղել հարկային օրենսգրքի հերթական փոփոխության քննարկմանը, ըստ որի, ֆիզիկական անձանց համար բնակտարածքի վարձումից ստացած եկամտահարկը 20-ից նվազեցվելու է մինչեւ 5 տոկոս:*

*Հիշեցնենք, որ դեռեւս փետրվարի 19-ին կառավարության նիստում վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդես եկավ բնակհարկի նվազեցման առաջարկությամբ:*

### ՆԵՐՈՒՄ՝ 78 ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, Զատկի տոնի կապակցությամբ, ներում է շնորհել 78 դատապարտյալի: Համաներվածներից 57-ն արդեն ազատվել են պատժական հաստատություններից: Ինչ վերաբերում է մնացած դատապարտյալներին, ապա նրանց պատժաժամկետները կրճատվել են: Ընդամենը հանձնաժողովը քննել է 460 գործ:*

*Ներվածների թվում չկան կանայք, անչափահասներ, ինչպես նաեւ անժամկետ դատապարտված անձինք:*

# ՄԵԾ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*Մեծ եղեռնը Առաջին համաշխարհային պատերազմի (1914-18թթ.) ու դրան հաջորդած տարիներին Օսմանյան կայսրության եւ քեմալական կառավարության՝ Արեւմտյան Հայաստանում, Կիլիկիայում եւ կայսրության մյուս հայաբնակ վայրերում, ինչպես նաեւ Արեւելյան Հայաստանում իրագործած հայ ազգաբնակչության զանգվածային տեղահանության ու բնաջնջման պետական քաղաքականությունն է: Բնորոշվում է որպես XX դարի առաջին ցեղասպանություն:*

Հայերի, ինչպես նաեւ Օսմանյան կայսրության մյուս քրիստոնյա բնակչության դեմ իրագործված ցեղասպանության թուրքական քաղաքականության հիմքում պանիսլամիզմի եւ պանթյուրքիզմի պետական դար-



ձած գաղափարախոսություններն էին:

Երիտթուրքական կառավարությունը, մտնելով Առաջին համաշխարհային պատերազմի մեջ, «Մեծ Թուրան» ստեղծելու հեռահար ծրագրեր ուներ: Այդ նպատակի իրականացման ճանապարհին անհրաժեշտ էր առաջին հերթին ոչնչացնել հայ բնակչությանը՝ նրանց մեղադրելով ռուսական կողմնորոշման եւ պանթյուրքիստների զավթողական ծրագրերը խոչընդոտելու համար: Հայերի բնաջնջումը միաժամանակ օրակարգից կհաներ նաեւ Հայկական հարցը, որով վերջ կդրվեր եվրոպական տերությունների միջամտություններին Թուրքիայի ներքին գործերին:

Ցեղասպանության ծրագիրն ուներ նաեւ ակնհայտ նյութական դրդապատճառներ. այն է՝ ձերբազատվել հայերի տնտեսական մրցակցությունից եւ բռնազավթել նրանց անշարժ ու շարժական գույքը:

Դեռեւս Առաջին աշխարհամարտից առաջ հայ բնակչության բնաջնջման ծրագիրը մշակել էին կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան, ռազմական նախարար Էնվեր փաշան, ծովային նախարար Ջեմալ փաշան, երիտթուրքական կուսակցության կենտկոմի անդամ Բեհաէդդին Շաքիրը եւ ուրիշներ: Առաջին աշխարհամարտի սանձազերծումը պատեհ առիթ է ստեղծել հայերի զանգվածային ոչնչացման ծրագրերի իրագործման համար: 1914թ.-ի հոկտեմբերին Թալեաթի նախագահությամբ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ կազմվել է հատուկ մարմին՝ «Երեքի գործադիր կոմիտե», որին հանձնարարվել էր կազմակերպել հայ բնակչության տեղահանությունն ու կոտորածը:

Իրենց ծրագիրն իրականացնելու նպատակով իշխանությունները նախ փորձել են հայերին զրկել դիմադրելու հնարավորությունից: Հայերի ցեղասպանության ծրագիրն իրականացվել է 3 փուլով:

Առաջին՝ պատերազմի սկզբին բանակ զորակոչված 18-45 տարեկան 60 հզ. հայ զինվորները, Սարիղամիշի մոտ թուրքական բանակի ջախջախումից հետո, որպես քավության նոխազ, զինաթափվել են եւ 1915թ.-ի փետրվարին Էնվերի հրամանով ոչնչացվել:

Ցեղասպանության երկրորդ փուլը հայ մտավորականության եւ հայությանը կազմակերպող ուժի ձերբակալությունն ու ոչնչացումն էր: Զեյթունում խոշտանգվելով սպանվել է ազատագրական շարժման գործիչ Նազարեթ Չաուշը (Նորաշխարհյան), Վանում՝ Իշխանը (Նիկողայոս Պողոսյան), օսմանյան խորհրդարանի պատգամավոր Արշակ Վռամյանը (Օնիկ Դերձակյան) եւ շատ ուրիշներ: 1915թ.-ի ապրիլի 24-ին եւ հաջորդ օրերին Կոստանդնուպոլսում ձերբակալվել եւ Անատոլիայի խորքերն է աքսորվել մոտ 800 մտավորական. նրանց թվում էին կոմպոզիտոր Կոմիտասը, գրողներ Գրիգոր Զոհրապը (նաեւ խորհրդարանի պատգամավոր էր), Ռուբեն Սեւակը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Զարդարյանը, բժիշկ Նազարեթ Տաղավարյանը եւ շատ ուրիշներ: Մեծ մասն սպանվել է:



Երրորդ փուլում սկսվել է տասնյակ հազարավոր անպաշտպան կանանց, երեխաների ու ծերերի զանգվածային տեղահանությունը: Որոշ վայրերում հայ բնակչությունը փորձել է դիմադրել: 1915թ.-ի մայիսհունիսին սկսվել են Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Խարբերդի, Սեբաստիայի, Դիարբեքիրի նահանգների, Կիլիկիայի, Արեւմտյան Անատոլիայի եւ այլ վայրերի հայ բնակչության տեղահանությունն ու կոտորածը: Մշտական բնակության վայրերից բռնի տեղահանված հայերը կարավաններով ուղարկվել են կայսրության խորքերը, Միջագետք եւ Սիրիա, որտեղ նրանց համար ստեղծվել էին հատուկ ճամբարներ: Հարյուրհազարավոր մարդիկ էլ դարձել են սովի, հիվանդությունների եւ համաճարակների զոհ:

Կոտորածը շարունակվել է նաեւ հետագա տարիներին: Հազարավոր հայեր ոչնչացվել են Ռաս ուլ Այնի, Դեյր էզ Զորի եւ այլ ճամբարներում:



Չնայած օրհասական դրությանը՝ 1915 թ.-ին Արեւմտյան Հայաստանում եւ կայսրության մի շարք շրջաններում հայությունը դիմել է ինքնապաշտպանության: Հերոսամարտեր են տեղի ունեցել Վանի վիլայեթում (Շատախ, Հայոց ձոր, Գյավաշ, Թիմար եւ այլ վայրերում), Վան քաղաքում, Մուշում, Սասունում, Շապին-Գարահիսարում, Մուսա լեռան վրա, Ուրֆայում...

1918թ.-ին արշավելով Այսրկովկաս՝ թուրքական զորքերը շարունակել են կոտորածը Հայաստանում, իսկ սեպտեմբերին, երբ անգլիական ուժերը լքել են դիրքերը, թուրքերը գրավել են Բաքուն եւ ադրբեջանական ազգայնամոլների հետ կոտորել 30 հզ. հայի:

1918-20թթ.-ին հայ բնակչության ջարդեր են կազմակերպվել Շուշիում:

1920թ.-ի թուրք-հայկական պատերազմի (սեպտեմբերի 28-նոյեմբերի 18) ընթացքում թուրքական զորքերը Ալեքսանդրապոլում եւ գավառի գյուղերում զանգվածաբար ոչնչացրել են խաղաղ հայ բնակչությանը, կողոպտել ունեցվածքը:

1915-16թթ.-ին Եղեռնից մազապուրծ Կիլիկիայի հայերը, որոնք ապաստանել էին արաբական երկրներում, Թուրքիայի պարտությունից հետո սկսել են վերադառնալ իրենց բնակության վայրերը: Ըստ դաշնակիցների գաղտնի համաձայնության (1916թ.)՝ Կիլիկիան մտնելու էր Ֆրանսիայի ազդեցության գոտի: 1919թ.-ին Կիլիկիայում հայերի թիվը 120-130 հզ. էր, 1920թ.-ին հասել է 160 հազարի: Այդտեղ տեղաբաշխված ֆրանսիական զորքերի հրամանատարությունը միջոցներ չի ձեռնարկել՝ ապահովելու հայ բնակչության անվտանգությունը, որից օգտվելով՝ քեմալականները բռնություններ են սկսել հայերի դեմ: 1920թ.-ի հունվարին, 20 օրվա մարտերի ընթացքում, Մարաշում զոհվել է 11 հզ. հայ:

Հայոց ցեղասպանության վերջին արարը 1919-22թթ.-ի հույն-թուրքական պատերազմի ընթացքում հայերի կոտորածն էր Թուրքիայի արեւմտյան շրջաններում: 1922թ.-ի սեպտեմբերի 9-ին նրանք մտել են Իզմիր եւ կազմակերպել հայերի ու հույների ջարդը, խորտակել են Իզմիրի նավահանգստում կանգնած հայ եւ հույն փախստականներով լեփ-լեցուն, ինչպես նաեւ փախստականներին փոխադրելու պատրաստ նավերը:



Թուրքական իշխանությունների իրականացրած Հայոց ցեղասպանության հետեւանքով կայսրության 2,5 մլն հայերից զոհվել է 1,5 մլն-ը: Շուրջ 800 հզ. հայեր գաղթական են դարձել եւ ցրվել աշխարհով մեկ: Հայության մի մեծ հատված 1915-1918թթ.-ին գաղթել եւ ապաստան են գտել Թբիլիսիում, Բաթումիում, ուրիշ երկրների խոշոր քաղաքներում:

Այդ ժամանակ Թբիլիսիում Հովհաննես Թումանյանի գլխավորությամբ ստեղծվել էր շտաբ, որի կազմում էին վրաց մտավորականներ, հայտնի գրողներ ու արվեստագետներ, ինչպիսիք էին Իոսիֆ Գրիշաշվիլին, Իոսիֆ Իմեդաշվիլին եւ ուրիշներ: Շտաբը ակտիվ գործունեություն ծավալեց, անցկացրեց հանգանակություններ փախստականներին պարենով եւ հագուստով, թեկուզ ժամանակով ապաստարաններով ապահովելու ուղղությամբ:

Արեւմտյան Հայաստանը զրկվել է իր բնիկ հայ բնակչությունից: Բռնի մահմեդականացվել է 200 հզ. հայ, որոնց սերունդներն այժմ հիմնականում բնակվում են Ճորոխ գետի հովտում: Այդ ջարդերի ժամանակ ոչնչացվել է 66 քաղաքների ու 2500 գյուղերի հայ եւ այլազգի քրիստոնյա բնակչությունը: Կողոպտվել ու քանդվել են 2350 եկեղեցի ու վանք, 1500 դպրոց ու վարժարան:

Հայոց ցեղասպանության համար պատասխանատվություն է կրում նաեւ կայզերական Գերմանիայի կառավարությունը, որը ոչ միայն տեղյակ էր նախապատրաստվող ոճրագործությանը, այլեւ նպաստել է դրա իրագործմանը: Գերմանիայի մեղսակցությունը նշել են գերմանացի հանրահայտ մտավորականներ Յոհաննես Լեփսիուսը, Արմին Վեգները, Կարլ Լիբկնեխտը եւ ուրիշներ:

Աշխարհի առաջադեմ հասարակական, քաղաքական եւ մշակույթի ու գիտության բազմաթիվ գործիչներ (Ջեյմս Բրայս, Առնոլդ Թոյնբի (Մեծ Բրիտանիա), Մաքսիմ Գորկի, Վալերի Բրյուսով (Ռուսաստան), Անատոլ Ֆրանս, Ժակ դը Մորգան (Ֆրանսիա), Յոզեֆ Մարկվարտ (Գերմանիա), Հերբերտ Գիբոնս (ԱՄՆ), Ֆրանց Վերֆել (Ավստրիա) եւ շատ ուրիշներ) դատապարտել են Օսմանյան կայսրության ջարդարար հանցագործությունը:

# ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԷՆՎԵՐԻՆ, ԹԱԼԵԱԹԻՆ ԵՎ ՋԵՄԱԼԻՆ ՀԵՌԱԿԱ ԴԱՏԱՊԱՐՏԵՑ ՄԱՀՎԱՆ

*Մուդրոսի զինադադարի (1918) կնքումից անմիջապես հետո, համաշխարհային հասարակայնության ճնշման տակ, թուրքական նոր կառավարությունը որոշեց պատասխանատվության ենթարկել Թուրքիան պատերազմի մեջ ներքաշած եւ հայերի ցեղասպանությունը կազմակերպած երիտթուրքական «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության ղեկավար գործիչներին: Երիտթուրքերի դատավարության նյութերը հերքում են թուրքական պաշտոնական շրջանների՝ հայերի ցեղասպանությունը ժխտող պնդումները:*

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո երիտթուրք պարագլուխները գերմանական սուզանավով փախան Գերմանիա: 1918թ. դեկտեմբերի 16-ին Օսմանյան կայսրությունը հատուկ հրամանագրով դատավարություն սկսեց Միություն եւ առաջադիմություն կուսակցության ղեկավարության դեմ: Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Սայիդ Հալիմը, Նազըմը, Շաքիրը, Ջեմալ Ազմին եւ մյուսները մեղադրվում էին Օսմանյան կայսրությանը պատերազմի մեջ ներքաշելու, քրիստոնյա (հայ) հպատակների ջարդի եւ տեղահանության կազմակերպման մեջ: Դատավարությունը տեւեց մոտ երկու ամիս՝ 1919-ի ապրիլի 28-ից հունիսի 26-ը:

Դատավճիռը հրապարակվեց հուլիսի 5-ին. 31 մեղադրյալներից 4-ը՝ Թալեաթը, Էնվերը, Նազըմը եւ Ջեմալը, հեռակա կարգով դատապարտվեցին մահվան, մյուսները՝ տարբեր տարիների բանտարկության: Իթթիհատի շրջանային 36 քարտուղարների նկատմամբ կայացվեց առանձին դատավարություն, որի դատավճիռը հրապարակվեց 1920-ի հունվարի 8-ին: 3 հոգի դատապարտվեց մահվան, 10-ը՝ տարբեր տարիների բանտարկության, թեպետ վերոնշյալից ոչ մեկը ի կատար չածվեց: Փաստորեն, այս ամենը կեղծիք էր: Ուստի, հայ քաղաքական շրջանակները ստիպված էին իրենք պատժել թուրք ոճրագործներին:

1919-22թթ. սպանվեցին ոճրագործներ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը եւ ուրիշները:

# ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ԱՌԱՋԻՆ. «ՀԻՇԵԼԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է. ԾԱԾԿԵԼ ՀԱՆՑԱՆՔԸ, ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԹՈՂՆԵԼ, ՈՐ ՎԵՐՔԸ ԱՐՆԱՀՈՍԻ»

(Սկիզբը` 1-ին էջում)

րերից սուրբ Գրիգոր Նարեկացին Կաթոլիկ եկեղեցու կողմից հռչակվեց «եկեղեցու վարդապետ»:

Պատարագի ավարտին հայկական ծեսով կատարվեց հոգեհանգստյան արարողություն` Մեծ Եղեռնի նահատակների համար, որից հետո Ամենայն Հայոց կաթողիկոսը իր խոսքն ուղղեց Ֆրանցիսկոս պապին եւ ներկա հավատավոր ժողովրդին:

Պատարագին հատուկ հայտարարությամբ ելույթ ունեցավ Հռոմի պապը:«Հայոց ցեղասպանության, այդ անծայրածիր խենթ ողբերգության 100-ամյակը հիշելը պարտադիր է, որովհետեւ ուր հիշատակ չկա, այնտեղ չարիքը դեռ բաց է պահում վերքը: Ծածկել հանցանքը, նշանակում է թողնել, որ վերքը արնահոսի»: Այդ մասին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված պատարագին ասաց Հռոմի Ֆրանցիսկոս պապը:

«Սիրելի հայ եղբայրներ ու քույրեր, տարբեր առիթներով սահմանել եմ, որ ապրում ենք պատերազմի ժամանակաշրջան, որովհետեւ ներկա ենք ավերածությունների խենթությանը, որոնք, ցավոք, այսօր շարունակվում են: Մեր քրիստոնյա եղբայրներից շատերը նաեւ իրենց ազգային պատկանելության համար դաժանորեն սպանվում են, գլխատվում, խաչվում, կենդանի այրվում, կամ բռնի կերպով տեղահանվում: Այսօր եւս, ցավոք սրտի, դեռ ապրում ենք մի տեսակ ցեղասպանություն, որի պատճառը համընդհանուր լռությունն է»,- ասաց Հռոմի պապը:

Նրա խոսքով` մարդկությունն անցյալ դարում երեք մեծագույն ողբերգություններ է ապրել: «Առաջինը համընդհանուր ձեւով սահմանվում է որպես 20-րդ դարի համընդհանուր առաջին ցեղասպանություն, որին զոհ գնաց ձեր ազգը, ինչպես նաեւ հույներն ու ասորիները, զոհ գնացին նաեւ կանայք, ծերեր, նույնիսկ երեխաներ: Մյուս երկուսի պատասխանատուն նացիզմն ու ստալինիզմը:

Թվում է, թե մարդկությունը չի դադարում անմեղ արյուն սփռելուց, թվում է, թե մարդկային տանիքը մերժում է սովորել իր սխալներից եւ այսօր եւս տակավին կան ոմանք, որ ջանք են թափում վերացնելու իրենց նմաններին, մեղսակցությամբ նրանց, ովքեր անտարբերությամբ չեն գործում: Դեռ չենք սովորել, որ պատերազմը խենթություն է:

Սիրելի հայ հավատացյալներ, այսօր հիշում ենք խոցված սրտով, այդ անծայրածիր խենթ ողբերգության 100-ամյակը, հիշելը պարտադիր է, որովհետեւ ուր հիշատակ չկա, այնտեղ չարիքը դեռ բաց է պահում վերքը: Ծածկել հանցանքը, նշանակում է թողնել, որ վերքը արնահոսի»,- ասաց Հռոմի Ֆրանցիսկոս պապը:

Պատարագի ընթացքում պապը ողջունեց եւ շնորհակալություն հայտնեց ներկա գտնվելու համար ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին: Պապը ողջունեց նաեւ իր եղբայր պատրիարք եպիսկոպոսներին` Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսին, ինչպես նաեւ հայ կաթոլիկների պատրիարք Ներսես Պետրոս XIX-ին: «Ողջունում եմ այն համոզմունքով, որ չարիքը չի գալիս բարի Աստծուց, այլ արդյունքն է մարդկային դաժանության: Երբեք դաժանությունը չպետք է արդարացվի Աստծու անունով: Մեր աչքերը հառենք բարձրյալին, ով հաղթել է չարիքին եւ մահվան»,- իր խոսքը եզրափակեց Հռոմի պապը:

# ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ` ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԷՊԻԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում ապրիլի 12-ին կայացած պատարագը եւ Հռոմի Ֆրանցիսկոս պապի` Հայոց ցեղասպանությունը դատապարտող հայտարարությունը միջազգային մակարդակում 20-րդ դարի մարդկության դեմ իրականացված առաջին հանցագործության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացում դետոնատորի դեր ունեցան:

ԱՄՆ Պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչ **Մարի Հարֆը,** արձագանքելով Կաթոլիկ եկեղեցու առաջնորդի հայտարարությանը, ասաց, որ. «ԱՄՆ նախագահը եւ վարչակազմի մյուս բարձրաստիճան ներկայացուցիչները քանիցս պատմական փաստ են ճանաչել 1,5 մլն հայերի ոչնչացումը Օսմանյան կայսրության վերջին օրերին եւ ընդգծել, որ դրա լիարժեք հաստատումը համապատասխանում է բոլորի շահերին, ներառյալ Թուրքիան, Հայաստանը եւ ԱՄՆ-ը»:

Պետք է նշել, որ միջազգային հանրությունը չի բավարարվում միայն ցեղասպանության մասին տեղեկություններ որոնելով կամ տարածելով: Մարդկության առաջատար հատվածը պահանջում է տարբեր պետությունների իշխանություններից ճանաչել եւ դատապարտել Օսմանյան կայսրության գործողությունները հայության դեմ: Ընդ որում, այդ պահանջը հաճախ վերածվում է զգայուն ճնշման: Այսպես, հեղինակավոր **The Jerusalem Post** պարբերականի հոդվածագիր **Շմուլի Բոտեախը** հիշեցնում է, որ անցած կիրակի Հռոմի Ֆրանցիսկոս պապը բարոյական խիզախություն ցուցաբերեց` բացահայտ կոչ անելով ճանաչել 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը, ինչին ի պատասխան Թուրքիան` Ռեջեփ Թայիփ Էրդողանի գլխավորությամբ, անմիջապես հետ կանչեց իր դեսպանին: «Ինչո՞ւ Բարաք Օբաման չի ճանաչել ցեղասպանությունը, հատկապես, եթե որպես նախագահի թեկնածու խոստացել էր դա անել:

Մեկ այլ հոդվածում նույն «The Jerusalim Post»-ը պահանջում է նաեւ Իսրայելի իշխանություններից ճանաչել Հայոց ցեղասպանությունը: «Հռոմի Ֆրանցիսկոս պապը ճանաչեց, հիմա արդեն Իսրայելի հերթն է»:

Նմանատիպ հոդվածներով են հանդես եկել նաեւ աշխարհում մեծ ճանաչում ունեցող **«The Boston Globe», «Washington Post»-ը, «The Guardian»-ը** եւ այլ պարբերականներ: «Պարոն նախագահ, Հռոմի պապի պես խիզախ եղեք, Հայոց ցեղասպանությունը ցեղասպանություն կոչեք»,- գրում է **«Washington Post»-ը,** եւ հույս հայտնում, որ ԱՄՆ նախագահը իր ժառանգությունը կամրապնդի որպես հստակ բարոյական կողմնորոշում ունեցող պետական գործիչ, կասի այն, ինչ նախկինում անասելի էր, կցուցադրի նույն քաջությունը, ինչ Հռոմի պապը, եւ այս ողբերգությունը կկոչի իր անունով` ցեղասպանություն:

Իսկ ահա ինչ է գրում թուրքական մամուլը. **«Հուրրիյեթ»** թերթի շապիկին «1915-ի ճգնաժամը` Հռոմի պապի հետ» վերնագիրն է: «Հռոմի պապ Ֆրանցիսկոսը կիրակի կայացած պատարագի ընթացքում 1915-ի դեպքերը «ցեղասպանություն» է կոչել, ինչին ԱԳՆ-ը պատասխանել է` Վատիկանի դեսպանին կանչելով ու ասելով, որ իրենք հիասթափված են: Դավութօղլուն էլ (Թուրքիայի վարչապետը) ասել է, որ Պապին սազական չէ ցավերի միակողմանի մոտեցումը»,- գրել է թերթը:

**«Հաբերթուրք».** «Ռասիզմին մրցանակ» վերնագրված նյութում օգտագործվել է Դավութօղլուի հայտարարությունն այն մասին, որ Պապի հայտարարությունը «Եվրոպայում աճող ռասիզմին շնորհված մրցանակ է»:

**«Միլլիյեթ».** «Ցեղասպանություն ասած Պապին կոշտ արձագանք» վերնագրով նյութում նշվում է, որ Վատիկանի դեսպանը կանչվել է ԱԳՆ, իսկ Վատիկանում Թուրքիայի դեսպանը` Թուրքիա:

**«Աքշամ».** «Պապն ինքն իրեն հակասում է» վերնագրով նյութում մեջբերվում է Թուրքիայի արտգործնախարարության հայտարարությունը, որում նշվել է, որ Պապի երեկվա հայտարարությունը հակասում է Ստամբուլի այցի ընթացքում հղած խաղաղության մեսիջին:

# ՍԱՄՎԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆ. «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ԿՆՊԱՍՏԻ ՆՄԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒՆ»



*Ապրիլի 15-ին Վրաստանի խորհրդարանի Ախալքալաքիից մեծամասնական պատգամավոր Սամվել Պետրոսյանը, ելույթ ունենալով Վրաստանի խորհրդարանի լիագումար նիստում, կոչ արեց ճանաչել ու դատապարտել հայերի ցեղասպանությունը:*

Խորհրդարանականը հայտարարեց, որ Ցեղասպանության ճանաչումն անհրաժեշտ է ապագայում այդօրինակ հանցագործությունները կանխելու համար:

«Հարցը պատմական կարեւորություն ունի: Մենք` ծագումով հայեր լինենք, թե այլ ազգերի ներկայացուցիչներ, Վրաստանի քաղաքացիներն ենք: Մենք նույն երկրի զավակներն ենք եւ պետք է հաշտ ու միասնական լինենք: Ուստի կարեւոր է, որ պատմական իրադարձությունները ճիշտ գնահատվեն: Հուսով եմ, որ Հայաստանը եւ Թուրքիան ընդհանուր լեզու կգտնեն տարածաշրջանում խաղաղության եւ կայունության համար: Հենց դրա համար էլ կարեւոր է պատմության համարժեք գնահատականը: Այն, ինչ հարյուր տարի առաջ տեղի ունեցավ Օսմանյան կայսրությունում, մինչ օրս էլ խորը վերք է հայ ժողովրդի համար: Հայերի ցեղասպանությունը ճանաչված է միջազգային բազմաթիվ կազմակերպությունների, Եվրախորհրդի, Եվրամիության եւ ուրիշների, ինչպես նաեւ ԱՄՆ-ի եւ առաջատար այլ երկրների կողմից: Ես վստահ եմ, որ երբեւիցե մենք կկարողանանք ընդհանուր դիրքորոշում մշակել պատմության այս ծանրագույն էջի շուրջ: Ցեղասպանության դատապարտումը կնպաստի ապագայում նման հանցագործություններից բոլոր ժողովուրդներին պաշտպանելուն:

Ես վստահ եմ, որ եթե ժամանակին դատապարտվեր հայերի ցեղասպանությունը, նման ողբերգություններ տեղի չէին ունենա աշխարհի տարբեր անկյուններում: Այդ հանցագործությունը չպետք է կրկնվի ոչ մի ժողովրդի նկատմամբ: Կոչ եմ անում բոլոր ժողովրդավարական երկրներին, որտեղ դեռեւս դատապարտված ու գնահատված չէ այդ փաստը, ճանաչել Ցեղասպանությունը, որպեսզի ապագայում կանխվի նման հանցագործությունը որեւէ ժողովրդի դեմ»,- հայտարարեց Սամվել Պետրոսյանը:

## Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԵՑԻՆ Ա. ՍՈՒԼԵՅՄԱՆՈՎԸ, Ն. ԾԻԿԼԱՈՒՐԻՆ . . .

Սամվել Պետրոսյանի ելույթից հետո պատգամավոր Ազեր Սուլեյմանովը («Միասնական ազգային շարժում» խմբակցություն), իր խոսքում հերքեց ցեղասպանության իրողությունը: «Դա ցեղասպանություն չէր, դա քաղաքացիական հակամարտություն էր, քաղաքացիական պատերազմ»,- ասաց Սուլեյմանովը, հավելելով, որ պետք չէ խոսել 100 տարվա վաղեմության դեպքերի մասին, Վրաստանի խորհրդարանի պատգամավորների ուշադրությունը սեւեռելով հայ-ադրբեջանական կոնֆլիկտի վրա:

Խոսեց նաեւ «Վրացական երազանք» խմբակցության անդամ, պատգամավոր Մախիդ Դարզիեւը: «Վրաստանի կողմից ցեղասպանության ընդունումը կվատթարացնի հարեւան Թուրքիայի հետ հարաբերությունները, որը Վրաստանի ռազմավարական դաշնակիցն է, եւ Հյուսիս Ատլանտյան դաշինքի անդամ է: Այս հարցի քննարկումը չի բխում Վրաստանի ոչ ազգային, ոչ էլ պետական շահերից»:

Այնուհետեւ ելույթ ունեցավ Նուգզար Ծիկլաուրին («Միասնական ազգային շարժում» խմբակցություն): Վերջինիս խոսքերով` Վրաստանն ստեղծել է ունիկալ մի մոդել, որտեղ հայերն ու ադրբեջանցիներն ապրում են մի երկրում, եւ չի եղել դեպք, որ այդ երկու ժողովուրդները մեզ մոտ միմյանց դիմակայեն: Եվ պատգամավորների նպատակն է կառուցել ուժեղ պետություն, իսկ պատմության հարցերով թող պատմաբանները եւ գիտնականներն զբաղվեն:

## ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՆԱՁԵՎԸ

*Եվրոպական խորհրդարանի լիագումար նիստում ընդունվեց «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի» վերաբերյալ բանաձեւը:*

Ընդունված փաստաթուղթը հաստատում է 1987 թվականի` ցեղասպանությունը փաստող բանաձեւի դրույթներն ու կոչ անում Թուրքիային ճանաչել ցեղասպանությունը: Քվերակության արդյունքների հրապարակումից հետո դահլիճում ծափահարություններ հնչեցին:

Նիստի ժամանակ ելույթ ունեցողների ճնշող մեծամասնությունը պահանջում էր Թուրքիայից ընդունել Հայոց ցեղասպանության փաստը: Այսպես, բուլղարացի պատվիրակ Կրիստալինա Ջերոջիեւան հայտարարեց. «Այն, ինչ տեղի է ունեցել հարյուր տարի առաջ, այժմ էլ սահմռկեցուցիչ է բոլորիս համար: Ապրիլի 24-ին մենք կվշտակցենք հայ ժողովրդին, քանի որ այն, ինչ կատարվել է Օսմանյան կայսրության վերջին տարիներին հայերի հետ, ցեղասպանություն է»:

Գերմանացի պատվիրակ Էլմար Բրոքը եւս կատարվածը անվանեց ցեղասպանություն ու շեշտեց. «Հայեր են սպանվել 20-րդ դարասկզբին, եւ այդ փաստը պետք է հենց ցեղասպանություն գնահատել»: Մեկ այլ գերմանացի պատվիրակ Ֆլեքենշթեյն Կնուտը հայտարարեց, որ ցեղասպանությունը պետք է կոչել իր անունով: «Դա պետք է ընդունի նաեւ Թուրքիան: Ես Թուրքիայի իշխանություններին կոչ եմ անում հրատապ ու ճիշտ քայլեր ձեռնարկել: Իհարկե, գիտակցում եմ, որ պատմության հետ առերեսվելը բարդ բան է, բայց դա կարեւոր է միջազգային հարաբերություններ կառուցելու տեսանկյունից»:

Միացյալ Թագավորության ներկայացուցիչ Չարլզ Թանոքն էլ Թուրքիային առաջարկում էր. «Պետք է որպես դիվանագիտական ժեստ Թուրքիան բաց անի սահմանը»:

Քննարկման ժամանակ միջադեպ տեղի ունեցավ. Իտալիայի ներկայացուցիչ Բորգեզիո Մարիոն իր ելույթի ընթացքում խիստ վրդովվեց` խոսելով Էրդողանի` Հռոմի պապի հասցեին հնչեցրած մեղադրանքներին. «Այսպես մաֆիոզի պես խոսելով էլ ուզում է մուտք գործել ԵՄ: Այդ պահվածքով Թուրքիան չի կարող մուտք գործել Եվրամիություն»: Այս հայտարարությանը հաջորդեցին Եվրախորհրդարանի անդամների ծափահարությունները: